ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

3 հունիսի չորեքշաբթի 2026
տպագրության ԺԵ տարի

69
(3278)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ԼԵՆԱ ՆԱՆՈՒՇՅԱՆԻ ՆՈՐ «ՓՈՐՁԱՌՈՒԹՅՈՒՆԸ»

ՀՀ կառավարության վերջին նիստում ՀՀ առողջապահության նախարարի պարտականությունները կատարող, առողջապահության փոխնախարար Լենա Նանուշյանի պահվածքը մինչ օրս շարունակում է քննարկումների առարկա մնալ առողջապահական համակարգում: Բանն այն է, որ թանգարանների մասին օրինագծի քննարկման ժամանակ Նանուշյանը ձայն խնդրեց եւ դեմքի լուրջ արտահայտությամբ հայտարարեց, որ ցանկանում է կիսվել իր անձնական փորձառությամբ: Պարզվեց՝ փոխնախարարի «փորձառությունը» կապված էր Ազգային պատկերասրահից կատարած գնումների հետ: Նրա խոսքով՝ վերջերս այնտեղից գնել էր Արշիլ Գորկու պատկերով վերնաշապիկ եւ շատ գոհ էր դրա որակից:

Հիշեցնենք, որ այս պաշտոնյայի անունը տարիներ շարունակ կապվել է առողջապահության ոլորտում վիճահարույց եւ քննադատությունների արժանացած գործընթացների հետ: Նանուշյանը համարվում է Առողջապահության համընդհանուր ապահովագրության ծրագրի հիմնական պատասխանատուներից մեկը, մի նախաձեռնության, որի իրականացումը երկար ժամանակ ձգձգվեց, մինչեւ նախարար Անահիտ Ավանեսյանը ստիպված եղավ անձամբ ներգրավվել գործընթացում՝ այն առաջ մղելու համար: Նանուշյանի անունը հանրային քննարկումների կենտրոնում է հայտնվել նաեւ այն բանից հետո, երբ հայտնի դարձավ, որ նրա որդին առողջական հիմքով ազատվել է պարտադիր զինվորական ծառայությունից:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում



Հունիսի 7-ի ընտրություններին ընդառաջ Նիկոլ Փաշինյանի քարոզարշավի ամենաուշագրավ առանձնահատկություններից մեկը գրեթե անընդհատ ուղիղ եթերներն էին: Վարչապետը մայիսի սկզբից հանրային հանդիպումների, շրջայցերի եւ նախընտրական միջոցառումների ժամանակ մշտապես երեւում էր կրծքին ամրացված բարձրախոսով, որի միջոցով սոցիալական հարթակներում ուղիղ հեռարձակումներ էր իրականացնում: Այդ գործելաոճը մի քանի անգամ անհարմար իրավիճակների պատճառ դարձավ: Մասնավորապես, քարոզարշավի ընթացքում արձանագրվեց դեպք, երբ արտաքին քաղաքական ոլորտը համակարգող պատասխանատու նախարար Արարատ Միրզոյանը վարչապետի ականջին փորձեց ինչ-որ տեղեկություն փոխանցել, նրա կրծքին ամրացված բարձրախոսի պատճառով այդ խոսակցությունը լսելի դարձավ ուղիղ եթերի հետեւորդների համար: Սակայն «Ժողովուրդ» օրաթերթը նկատել է հետաքրքիր փոփոխություն. վերջին 5 օրերին Փաշինյանը հանրային միջոցառումների ժամանակ այլեւս չի երեւում կրծքին ամրացված ուղիղ եթերի բարձրախոսով: «Ժողովուրդ» օրաթերթի դիտարկմամբ՝ վերջին անգամ կրծքի բարձրախոսը տեսանելի է եղել շուրջ հինգ օր առաջ, որից հետո վարչապետը կարծես հրաժարվել է քարոզարշավի այդ ձեւաչափից:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում

Հայաստանի՝ Եվրասիական տնտեսական միությունում անդամակցության շուրջ վերջին շաբաթներին ակտիվացած քննարկումները, կարծես, ժամանակավորապես տեղափոխվել են երկրորդ պլան մինչեւ դեկտեմբեր: Աստանայում կայացած ԵԱՏՄ միջկառավարական խորհրդի նիստում ՀՀ փոխվարչապետ Մհեր Գրիգորյանի հնչեցրած հայտարարություններից հետո ակնհայտ դարձավ, որ պաշտոնական Երեւանը գոնե այս փուլում չի պատրաստվում կտրուկ քայլերի դիմել եւ փորձում է պահպանել աշխատանքային հարաբերությունները միության գործընկերների հետ: Սակայն եթե ԵԱՏՄ-ում Հայաստանի մնալու կամ դուրս գալու հարցը փաստացի հետաձգվել է, ապա դրա հետ անմիջականորեն կապված մեկ այլ կարեւոր խնդիր շարունակում է մնալ չլուծված: Խոսքը բնական գազի գնի մասին է: «Ժողովուրդ» օրաթերթը դեռ ապրիլի 1-ին գրել էր, որ Հայաստանի համար ռուսական գազի սակագնի վերանայումը գործնականում անխուսափելի է, եւ ՀՀ իշխանություններն արդեն իսկ տեղեկացված են, որ առաջիկայում գազի գնի բարձրացման հարցը կրկին հայտնվելու է օրակարգում: «Ժողովուրդ» օրաթերթի աղբյուրների փոխանցմամբ՝ այս թեմայով բանակցություններն ընթանում են վաղուց, սակայն մինչ այժմ Երեւանին չի հաջողվել ստանալ այնպիսի երաշխիքներ, որոնք կբացառեն թանկացման ռիսկը:

Մանրամասները՝ ArmLur.am կայքում



ArmLur.am-ը ուսումնասիրել է ԱՄՆ-Ադրբեջան հարաբերությունների վերջին զարգացումները, որոնք կապված են Ամերիկայի Միացյալ Նահանգների «Ազատության աջակցման մասին օրենքի» 907 բանաձեւի երկարաձգման, ինչպես նաեւ տարածաշրջանում հնարավոր նոր քաղաքական համաձայնությունների շուրջ ակտիվացած քննարկումների հետ: Հունիսի 1-ին Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւը իր սոցիալական հարթակներում հրապարակել էր ԱՄՆ նախկին նախագահ Դոնալդ Թրամփի կողմից իրեն ուղարկված նամակը, որը վերաբերում էր նշված օրենքի 907 բանաձեւի կիրառման չեղարկման երկարաձգման մասին հուշագրին: Ալիեւը նշել էր, որ շնորհակալ է Դոնալդ Թրամփին այդ փաստաթղթի համար, որը ներկայացվել է որպես նվեր եւ ուղեկցվել է անձնական ստորագրությամբ եւ բարեմաղթական խոսքերով: Ադրբեջանի նախագահի խոսքով՝ նա բարձր է գնահատում այդ քայլը եւ այն դիտարկում է որպես կարեւոր քաղաքական եւ դիվանագիտական ժեստ: Այս հրապարակումը փաստացի ցույց է տալիս, որ շարունակվում է ԱՄՆ կողմից այդ սահմանափակման ժամանակավոր չեղարկման քաղաքականությունը, որը տարիներ շարունակ կիրառվում է որպես գործիք ԱՄՆ-Ադրբեջան հարաբերությունների կարգավորման համար:

Մանրամասները՝ ArmLur.am կայքում

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

«ԱՆՀՐԱԺԵՇՏ Է ԲԱՑԵԼ ՆՈՐ ՇՈՒԿԱՆԵՐ»

ArmLur.am-ը զրուցել է նախկին դատավոր Սոֆյա Հովսեփյանի հետ:

- Հունիսի 7-ի ընտրություններից ի՞նչ ակնկալիքներ ունեք:

- Իմ հիմնական ակնկալիքն այն է, որ միասնական ուժերով հնարավոր լինի փոխել ներկայիս իշխանությանը եւ կանխել այն քաղաքականությունը, որը, իմ համոզմամբ, տանում է Հայաստանի թրքացման: Այսօր ակտիվորեն քարոզվում է հայերի եւ ադրբեջանցիների համակեցության գաղափարը, սակայն պատմությունը, հատկապես Արցախի վերջին իրադարձությունները, ցույց տվեցին, որ դա չափազանց բարդ եւ վտանգավոր գործընթաց է:

- Իշխանությունները հերքում են 300 հազար ադրբեջանցիների վերաբնակեցման վերաբերյալ պնդումները: Ձեր կարծիքով՝ դա իրական վտա՞նգ է, թե՞ ընդդիմության կողմից տարածվող քաղաքական թեզ:

- Կարծում եմ՝ միայն ընդդիմության թեզ անվանելն այնքան էլ ճիշտ չէ: Նման գաղափարների մասին պարբերաբար խոսվում է նաեւ ադրբեջանական կողմից: Ավելին, հասարակությունը տեսնում է, թե ինչ գործընթացներ են տեղի ունենում տարածաշրջանում: Ուստի մարդկանց մտահոգությունները բնական են եւ չեն կարող պարզապես կեղծիք համարվել:

- Եթե այդ վտանգն իրական է, ապա ինչո՞ւ ընդդիմադիր ուժերը չեն միավորվում:

- Այսօր քաղաքական դաշտը խիստ բեւեռացված է: Տարբեր քաղաքական ուժեր ունեն տարբեր առաջնորդներ եւ ընտրազանգվածներ: Շատերը մտավախություն ունեն, որ միավորման դեպքում կարող են կորցնել իրենց կողմնակիցների մի մասը: Սակայն եթե կա ընդհանուր նպատակ, ապա ապագայում համագործակցության հնարավորությունը բացառել չի կարելի:

- Գյումրիի ընտրությունները շատերի կողմից դիտարկվում են որպես քաղաքական կարեւոր ազդակ: Ինչպե՞ս եք գնահատում դրանց արդյունքները:

- Գյումրեցին իր քաղաքական խոսքն ասաց՝ անկախ բոլոր հանգամանքներից: Քաղաքի ընտրությունները ցույց տվեցին, որ քաղաքացիները պատրաստ են իրենց դիրքորոշումը հստակ արտահայտել: Կարծում եմ՝ այդ օրինակը կարող է ազդեցություն ունենալ նաեւ մյուս համայնքների վրա:

- Ինչպիսի՞ն պետք է լինեն Հայաստանի հարաբերությունները Ռուսաստանի հետ ընտրություններից հետո:

- Ես համոզված եմ, որ Հայաստանը չպետք է փչացնի հարաբերությունները որեւէ երկրի հետ: Պետք է վարել հավասարակշռված արտաքին քաղաքականություն՝ զարգացնելով հարաբերությունները եւ Ռուսաստանի, եւ Եվրոպական միության, եւ մյուս գործընկերների հետ: «Կամ-կամ»-ի քաղաքականությունը հաճախ ավելի շատ խնդիրներ է ստեղծում, քան լուծումներ:

- Ի՞նչ է պետք անել տնտեսության եւ արտահանման խնդիրները լուծելու համար:

- Անհրաժեշտ է բացել նոր շուկաներ եւ չկախվել միայն մեկ ուղղությունից: Եթե պետությունը ցանկանում է դիվերսիֆիկացնել տնտեսությունը, ապա պետք է նախապես ստեղծի համապատասխան պայմաններ, որպեսզի գյուղացիներն ու արտադրողները կարողանան իրենց ապրանքը արտահանել տարբեր երկրներ:

- Ձեր հիմնական ուղերձը ընտրողներին:

- Անկախ քաղաքական նախասիրություններից՝ կարեւոր է մասնակցել ընտրություններին եւ պատասխանատվությամբ որոշում կայացնել Հայաստանի ապագայի վերաբերյալ: Քաղաքացիների ակտիվ մասնակցությունն է որոշելու երկրի հետագա ուղղությունը:

Զրուցեց՝ ԻՐԻՆԱ ԱՏԱՆՅԱՆԸ

ԵՄ-Ն ԽՍՏԱՑՆՈՒՄ Է

Եվրոպական միության բանակցողները համաձայնության են եկել միգրանտների վերադարձի վերաբերյալ նոր օրենսդրության շուրջ, որը նպատակ ունի արագացնել եւ մեծացնել ԵՄ տարածքից արտաքսումների թիվը: Նոր կանոնակարգով անդամ երկրներին թույլատրվելու է ապաստան ստանալու մերժում ստացած անձանց տեղափոխել ԵՄ սահմաններից դուրս գտնվող հատուկ «վերադարձի կենտրոններ» (return hubs): Այս մեխանիզմը մի շարք երկրներ արդեն ուսումնասիրում են, սակայն իրավապաշտպան կազմակերպությունները զգուշացնում են, որ այն կարող է հանգեցնել մարդու իրավունքների խախտումների եւ վերահսկողության թուլացման: Եվրահանձնաժողովի միգրացիայի հարցերով հանձնակատար Մագնուս Բրունները հայտարարել է, որ նոր համաձայնությունը կօգնի ԵՄ-ին վերականգնել վերահսկողությունը թե՛ այն հարցում, թե ովքեր են մուտք գործում միություն, եւ թե՛ այն հարցում, թե ովքեր պետք է լքեն այն: Նրա խոսքով՝ ներկայում մերժված ապաստան հայցողների միայն շուրջ 27 տոկոսն է իրականում հեռանում ԵՄ-ից: Փաստաթուղթը նախատեսում է նաեւ ավելի խիստ միջոցներ այն անձանց նկատմամբ, որոնք համարվում են անվտանգության սպառնալիք: Ներդրվում են տնային խուզարկությունների, երկարատեւ կալանքի, մուտքի արգելքների եւ իշխանությունների հետ չհամագործակցողների նկատմամբ պատժամիջոցների կիրառման հնարավորություններ:

Եվրախորհրդարանի պատգամավոր Ֆրանսուա-Քսավիե Բելամին, որը բանակցություններում ներկայացնում էր Եվրոպական ժողովրդական կուսակցությունը, հայտարարել է, որ տարիներ շարունակ Եվրոպան սխալ ազդակ էր ուղարկում՝ թույլ տալով բազմաթիվ մարդկանց մնալ ԵՄ-ում նույնիսկ այն դեպքում, երբ նրանք օրինական իրավունք չունեին: Նրա խոսքով՝ այդ ժամանակաշրջանն ավարտվում է: Միաժամանակ կանոնակարգը բախվել է կոշտ քննադատության: Կանաչների խմբակցության ներկայացուցիչ Մելիսա Կամարան այն անվանել է «այլատյաց գաղափարախոսությանը ծառայող իրավական զինանոց»՝ քննադատելով հատկապես ԵՄ-ից դուրս գտնվող կենտրոնների ստեղծման, անչափահասների կալանավորման եւ բնակարանային ստուգումների դրույթները: Փախստականների միջազգային կոմիտեի ԵՄ հարցերով տնօրեն Մարտա Վելանդերի գնահատմամբ՝ համաձայնությունը «տագնապալի նոր փուլ» է ԵՄ միգրացիոն քաղաքականության մեջ: Նրա խոսքով՝նոր կանոնները կարող են ընդլայնել ձերբակալությունների եւ արտաքսումների հնարավորությունները, ինչպես նաեւ մեծացնել այն ռիսկը, որ մարդիկ կվերադարձվեն այնպիսի երկրներ, որտեղ կարող են ենթարկվել հետապնդումների կամ բռնությունների:

Համաձայնագիրը դեռ պետք է պաշտոնապես հաստատվի ինչպես ԵՄ անդամ պետությունների խորհրդի, այնպես էլ Եվրախորհրդարանի կողմից: Սակայն որոշ դրույթներ, այդ թվում՝ ԵՄ-ից դուրս վերադարձի կենտրոնների ստեղծման հնարավորությունը, կարող են ուժի մեջ մտնել անմիջապես ընդունումից հետո:

Ա. Վ.

ԱԼԻԿ ԱԼԵՔՍԱՆՅԱՆԸ ՁԵՐԲԱԿԱԼՎԵԼ Է

ՀՀ քննչական կոմիտեի հատկապես կարեւոր գործերի քննության գլխավոր վարչությունում ՀՀ ՆԳՆ-ից ստացված առերեւույթ հանցանքի վերաբերյալ հաղորդման առթիվ նախաձեռնված քրեական վարույթի նախաքննության շրջանակում ՀՀ ՆԳՆ ոստիկանության հետ համատեղ իրականացված միջոցառումների արդյունքում պարզվել է, որ «Ուժեղ Հայաստան»-ի աջակից Ա.Ա.-ն 2025 թվականի սեպտեմբերի 9-ից հանդիսանալով «Մեր ձեւով ազգային արժեքների պահպանություն» ՀԿ-ի հիմնադիր եւ գործադիր մարմնի ղեկավար, Ս.Կ.-ի աջակիցների, «Մեր ձեւով» ՀԿ-ի եւ «Ուժեղ Հայաստան» կուսակցության կողմից 2025 թվականի սեպտեմբերից մինչեւ 2026 թվականի մայիսն ընկած ժամանակահատվածում ՀՀ-ում կազմակերպած ցույցերին եւ հավաքներին մասնակցելու, այլ կերպ՝հավաքի մասնակիցներ հավաքագրելու իրական նպատակով՝ ՀՀ տարբեր վայրերում գործող «Մեր ձեւով» ՀԿ-ի գրասենյակներում ձեւականորեն, քողարկելով իր իրական մտադրությունը, քաղաքացիաիրավական, այդ թվում՝ ծառայությունների մատուցման պայմանագրերի հիման վրա տարբեր ժամանակահատվածներով աշխատանքի է ընդունել շուրջ 1400 քաղաքացու, որոնցից ավելի քան 400-ը համատեղությամբ աշխատել են նաեւ այլ ընկերություններում: Այս մասին տեղեկանում ենք ՔԿ-ից:

Նախաքննության ընթացքում պարզվել է, որ 2025 թվականի հոկտեմբերի 8-ից մինչեւ 2026 թվականի մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում «Մեր ձեւով» ՀԿ-ի բանկային հաշիվներին Ս.Կ.-ի հետ փոխկապակցված «Տաշիր» բարեգործական հիմնադրամից, «Ինտեգո Էներգո» եւ «Տաշիր Կապիտալ» ՓԲ ընկերություններից որպես «Նվիրատվություն», «Փոխառության տրամադրում» փոխանցվել է հանցավոր գործունեության արդյունքում ձեռք բերված՝ շուրջ 1.6 մլրդ ՀՀ դրամ, 230 հազար եվրո եւ 75 հազար ԱՄՆ դոլար:

Ա.Ա.-ն նույն ժամանակահատվածում հանցավոր ծագում ունեցող առանձնապես խոշոր չափերի գումարն օրինական գործունեության պատրվակով լեգիտիմացնելու նպատակով՝ աշխատանքի ընդունված քաղաքացիներին մեկ կամ ավելի ամիս որպես աշխատավարձ, ինչպես նաեւ ծառայությունների մատուցման դիմաց վճարելու քողի ներքո, նյութապես շահագրգռել է՝ ուղղորդելով մասնակցել Ս.Կ.-ի աջակիցների, «Մեր ձեւով» ՀԿ-ի եւ «Ուժեղ Հայաստան»-ի կողմից 2025 թվականի սեպտեմբերից մինչեւ 2026 թվականի մայիսն ընկած ժամանակահատվածում ՀՀ-ում կազմակերպած ցույցերին եւ հավաքներին:

Արդյունքում, աշխատանքի ընդունված քաղաքացիների գերակշիռ մասն աշխատանքի չեն հաճախել կամ ամսվա կտրվածքով կազմակերպությունների գրասենյակ են այցելել մեկ կամ մի քանի անգամ՝ չգիտակցելով նույնիսկ հասարակական կազմակերպությունում իրենց գործառույթների բնույթը եւ նպատակը: Հետագայում, Ա.Ա.-ն նշված աշխատակիցներին ազատել է աշխատանքից՝ առանց կանոնադրությամբ նախատեսված՝ ՀԿ-ի նպատակների իրագործման: Այսպիսով, Ա.Ա.-ն հանցավոր գործունեության արդյունքում ձեռք բերված՝հասարակական կազմակերպության հաշիվներին փոխանցված գումարներից որպես աշխատավարձ եւ դրան հավասարեցված այլ վճարումներ հատկացրել է 703 մլն 835 հզր 953 ՀՀ դրամ, իսկ որպես քաղաքացիաիրավական պայմանագրով աշխատանքի վարձատրություն՝ 59 մլն 428 հզր 521 ՀՀ դրամ՝ ընդհանուր՝763 մլն 264 հզր 474 ՀՀ դրամ: Նախաքննության ընթացքում կատարվել են բազմաթիվ վարութային եւ ապացուցողական գործողություններ, հարցաքննվել է շուրջ 500 անձ: Ա.Ա.-ի նկատմամբ հսկող դատախազի որոշմամբ հարուցվել է հանրային քրեական հետապնդում՝ Քրեական օրենսգրքի 236-րդ հոդվածի 2-րդ մասով (հավաքին մասնակցելու նպատակով նյութապես շահագրգռելը) եւ 296-դ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով (առանձնապես խոշոր չափերով փողերի լվացումը): Վերջինս քննիչի որոշմամբ՝ՀՀ ՆԳՆ ոստիկանության կողմից ձերբակալվել է՝ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու նպատակով:

ԻՐԱՎԻՃԱԿ

ՀԱՄԵՄԱՏԵԼ Է ՏՐՈՑԿՈՒ ՀԵՏ

ՌԴ Անվտանգության խորհրդի նախագահի տեղակալ Դմիտրի Մեդվեդեւը մեկնաբանել է Հայաստանի՝Եվրամիությանն անդամակցելու եւ ԵԱՏՄ-ում մնալու շուրջ ծավալվող քննարկումները՝ համեմատելով ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի դիրքորոշումը խորհրդային քաղաքական գործիչ Լեւ Տրոցկու հայտնի բանաձեւի հետ: Ռուսական «ՌԻԱ Նովոստի»-ի փոխանցմամբ՝ Մեդվեդեւը հայտարարել է, որ Փաշինյանը մտադիր չէ հանրաքվեով որոշել Հայաստանի՝Եվրամիության կամ Եվրասիական տնտեսական միության անդամակցության հարցը, քանի դեռ Հայաստանը պաշտոնական հրավեր չի ստացել Եվրամիությունից: «Փաստացի կիրառվում է Լեւ Տրոցկու հայտնի բանաձեւը՝ «Ոչ պատերազմ, ոչ խաղաղություն, իսկ բանակը՝ արձակել»»,-գրել է Մեդվեդեւը: Նրա խոսքով՝ Փաշինյանի դիրքորոշումը հետեւյալն է. «Ոչինչ չենք որոշի հանրաքվեով, քանի դեռ մեզ չեն հրավիրել Եվրամիություն: Իսկ հետո, բնականաբար, վազելով կգնանք Եվրոպա»: Մեդվեդեւի այս հայտարարությունը հնչում է այն ֆոնին, երբ վերջին շաբաթներին ակտիվացել են քննարկումները Հայաստանի արտաքին քաղաքական ուղղության, Եվրամիության հետ հարաբերությունների խորացման եւ ԵԱՏՄ-ում ՀՀ-ի հետագա անդամակցության վերաբերյալ:

ՀԱԲՎԱԾԵԼ Է

Իսրայելի ռազմաօդային ուժերը հունիսի 2-ին զանգվածային հարվածներ են հասցրել Լիբանանի հարավային եւ արեւելյան շրջաններին՝ թիրախավորելով 42 բնակավայր: Այս մասին հայտնել է լիբանանյան ռազմական աղբյուրը: Աղբյուրի տվյալներով՝ վերջին 24 ժամվա ընթացքում արձանագրվել է Իսրայելի կողմից իրականացված ընդհանուր 76 հարձակում: Դրանցից 42-ը եղել են ավիահարվածներ, 14-ը՝ անօդաչու թռչող սարքերի հարվածներ, 19-ը՝ հրետակոծություններ, իսկ մեկ դեպքով իրականացվել է պայթեցում: Առավել ինտենսիվ հարվածների են ենթարկվել Նաբաթիայի, Տյուրի, Մարջայունի եւ Բինթ Ջբեյլի շրջանները: Իսրայելական ավիացիան թիրախավորել է Յահմար աշ-Շքիֆ, Շուքեյն, Արզուն, Բլատ, Դիբբին, Հարիս, Քֆար Ռեմման, Տուլին, Հարուֆ, Մեյֆդուն, Շհուր եւ մի շարք այլ բնակավայրեր: Անօդաչու սարքերի հարվածներ են հասցվել նաեւ Նաբաթիայի, Ջաուտայի, Արքիի, Ջվայայի եւ Բուրջ Ռահհալի շրջաններին: Միաժամանակ «Հեզբոլլահ» շարժումը հայտարարել է, որ նույն ժամանակահատվածում իրականացրել է 41 հարձակում իսրայելական ռազմական օբյեկտների, տեխնիկայի եւ զինծառայողների դեմ՝ Լիբանանի հարավում եւ Իսրայելի հյուսիսում: Այս զարգացումները տեղի են ունենում այն պայմաններում, երբ Լիբանանի դեսպանությունը Վաշինգտոնում հայտարարել է, որ «Հեզբոլլահը» համաձայնել է ԱՄՆ-ի առաջարկած փոխադարձ հրադադարի տարբերակին: Ըստ առաջարկի՝ Իսրայելը պետք է դադարեցնի հարվածները Բեյրութի հարավային արվարձանների ուղղությամբ, իսկ «Հեզբոլլահը»՝հրաժարվի Իսրայելի տարածքի դեմ հարձակումներից: Նշվում է, որ հունիսի 2-3-ին Վաշինգտոնում ԱՄՆ միջնորդությամբ անցկացվում է Լիբանանի եւ Իսրայելի միջեւ ուղիղ բանակցությունների հերթական փուլը:

ՔՊ-Ն՝ԱԴԱՋԱՏԱՐ

ՈՎ ԻՆՉՔԱՆ Է ԾԱԽՍԵԼ

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը հրապարակել է 2026 թվականի մայիսի 23-27-ն ընկած ժամանակահատվածում Ազգային Ժողովի ընտրություններին մասնակցող կուսակցությունների եւ դաշինքների բանկային հաշիվների ֆինանսական միջոցների շարժի վերաբերյալ տվյալները:

Հրապարակված տեղեկանքից երեւում է, որ ամենամեծ ֆինանսական շրջանառությունը գրանցվել է «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության հաշվեհամարներում: «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը ստացել է 66 մլն 865 հազար 600 դրամ նվիրատվություն՝ 69 անձից, 1 մլն 319 հազար 900 դրամ անդամավճար՝ 24 անձից, ինչպես նաեւ 103 մլն 153 հազար 940 դրամ պետական ֆինանսավորում: Ընդհանուր մուտքերը կազմել են 171 մլն 339 հազար 440 դրամ: Ելքերից 60 մլն 52 հազար 165 դրամը փոխանցվել է նախընտրական հիմնադրամին, իսկ 866 հազար 291 դրամը ծախսվել է կոմունալ վճարների համար: Կուսակցության հաշվում հաշվետու ժամանակահատվածի ավարտին մնացել է 188 մլն 757 հազար 873 դրամ:

Ֆինանսական ակտիվությամբ երկրորդ տեղում է «Ուժեղ Հայաստան» կուսակցությունը: Այն ստացել է 73 մլն 250 հազար դրամ նվիրատվություն՝ 20 անձից: Կուսակցությունը 60 մլն դրամ փոխանցել է նախընտրական հիմնադրամ, 10 մլն 592 հազար 493 դրամ ծախսել գովազդային ծառայությունների, այդ թվում՝ ֆեյսբուքյան գովազդի վրա, 223 հազար դրամ՝ ըստ հաշիվ-ապրանքագրի, 88 հազար 570 դրամ՝ ծառայությունների դիմաց: Բացի այդ, վճարվել է 381 հազար 713 դրամ կոմունալ ծառայությունների համար եւ 490 հազար դրամ՝ Տավուշի, Արագածոտնի, Արմավիրի եւ Շիրակի մարզերում գտնվող անշարժ գույքերի վարձակալության համար: Հաշվի մնացորդը կազմել է 91 մլն 57 հազար 965 դրամ:

«Հայ Յեղափոխական Դաշնակցությունը» ստացել է 34 մլն դրամ նվիրատվություն՝ 13 անձից: Նույնքան գումար՝ 34 մլն դրամ, փոխանցվել է նախընտրական հիմնադրամին: Բացի այդ, 353 հազար դրամ վճարվել է գույքի վարձակալության համար: Մնացորդը կազմել է 2 մլն 874 հազար 627 դրամ:

«Միասնության թեւեր» կուսակցությունը ստացել է 21 մլն 750 հազար դրամ նվիրատվություն՝6 անձից: Ելքերը կազմել են 10 մլն 98 հազար 600 դրամ, որից 4 մլն 500 հազար դրամը փոխանցվել է նախընտրական հիմնադրամ, իսկ 5 մլն 598 հազար 600 դրամը՝ ծախսվել հաշիվ-ապրանքագրերի հիման վրա: Մնացորդը՝ 11 մլն 948 հազար 406 դրամ:

«Բարգավաճ Հայաստան» կուսակցությունը ստացել է 17 մլն 300 հազար դրամ նվիրատվություն՝2 անձից: 12 մլն 500 հազար դրամ փոխանցվել է նախընտրական հիմնադրամին: Հաշվի մնացորդը կազմել է 23 մլն 680 հազար 896 դրամ:

«Նոր ուժ» ռեֆորմիստական կուսակցությունը ստացել է 9 մլն 800 հազար դրամ նվիրատվություն՝5 անձից: Ելքերից 8 մլն 190 հազար դրամը փոխանցվել է նախընտրական հիմնադրամ, իսկ 1 մլն 199 հազար 540 դրամը՝ծախսվել TikTok-ի եւ Facebook-ի գովազդի վրա: Մնացորդը կազմել է 1 մլն 572 հազար 993 դրամ:

«Առաջ աջակենտրոն» կուսակցությունը ստացել է 4 մլն 999 հազար դրամ նվիրատվություն՝2 անձից: 4 մլն 276 հազար 323 դրամ ծախսվել է ֆեյսբուքյան գովազդի վրա, 450 հազար դրամ՝ գույքի վարձակալության, 150 հազար դրամ՝աշխատանքի վարձատրության նպատակով: Մնացորդը՝12 մլն 676 հազար 305 դրամ:

«Լուսավոր Հայաստան» կուսակցությունը ստացել է 1 մլն 500 հազար դրամ նվիրատվություն՝ 2 անձից: Google-ի եւ Facebook-ի գովազդի վրա ծախսվել է 3 մլն 194 հազար 950 դրամ: Մնացորդը կազմել է 6 մլն 258 հազար 737 դրամ:

«Նոր դարաշրջան» կուսակցությունը ստացել է 1 մլն 42 հազար դրամ նվիրատվություն մեկ անձից: 1 մլն 242 հազար 500 դրամ ծախսվել է գովազդային եւ հաշվապահական ծառայությունների վրա: Մնացորդը՝166 հազար 268 դրամ:

«Հայ ազգային կոնգրեսը» ստացել է 1 մլն դրամ նվիրատվություն մեկ անձից: Նույն գումարը փոխանցվել է նախընտրական հիմնադրամին, եւս 1 հազար դրամ ծախսվել է այլ նպատակով: Մնացորդը կազմել է 282 հազար 197 դրամ:

«Բոլորին դեմ եմ» ժողովրդավարական կուսակցությունը ստացել է 500 հազար դրամ նվիրատվություն՝ 3 անձից: Ֆեյսբուքյան գովազդի համար ծախսվել է 98 հազար 700 դրամ: Մնացորդը՝811 հազար 292 դրամ:

«Ազգային ժողովրդավարական բեւեռ» համահայկական կուսակցությունը ստացել է 610 հազար դրամ նվիրատվություն՝2 անձից, ինչպես նաեւ 186 հազար 36 դրամ վերադարձ ֆեյսբուքյան գովազդից: 410 հազար 900 դրամ փոխանցվել է նախընտրական հիմնադրամ, իսկ 281 հազար 940 դրամը ծախսվել է ֆեյսբուքյան գովազդի վրա: Մնացորդը կազմել է 1 մլն 382 հազար 592 դրամ:

«Հանրապետություն» կուսակցությունը ստացել է 134 հազար 90 դրամ՝նախընտրական հիմնադրամից վերադարձված գումարի տեսքով: 2 մլն դրամ փոխանցվել է նախընտրական հիմնադրամ, 1 մլն 200 հազար դրամ ծախսվել է հաշիվ-ապրանքագրերով, 33 հազար 600 դրամ՝ առողջության ապահովագրության համար: Բացի այդ, վճարվել է 1 մլն 664 հազար 853 դրամ աշխատավարձ եւ 7 հազար դրամ հարկ: Մնացորդը կազմել է 9 մլն 279 հազար 766 դրամ:

«Միավորված հայեր» կուսակցությունը ստացել է 200 հազար դրամ անդամավճար մեկ անձից: Ծախսվել է 2 հազար դրամ սպասարկման վճարի համար: Մնացորդը՝198 հազար դրամ:

Հայաստանի շնորհապետական կուսակցությունը ստացել է 52 հազար 500 դրամ նվիրատվություն՝ 10 անձից եւ 46 հազար 500 դրամ անդամավճար՝ 4 անձից: 200 հազար դրամ փոխանցվել է նախընտրական հիմնադրամ, ընդհանուր ելքերը կազմել են 215 հազար դրամ: Մնացորդը՝204 հազար 14 դրամ:

«Ժողովրդավարական համախմբում» կուսակցությունը մուտքեր չի ունեցել: 70 հազար 785 դրամ ծախսվել է, որից 66 հազար 285 դրամը՝ ֆեյսբուքյան գովազդի համար: Մնացորդը՝ 592 հազար 463 դրամ:

«Դեմոկրատիա, օրենք, կարգապահություն» կուսակցությունը ստացել է 6 հազար 100 դրամ նվիրատվություն 2 անձից: Նախընտրական հիմնադրամին փոխանցվել է 233 հազար 120 դրամ: Մնացորդը՝31 հազար 80 դրամ:

«Հանուն Հանրապետության ժողովրդավարության պաշտպանների դաշինքը» ստացել է 144 հազար դրամ՝ սխալ փոխանցված գումարի հետվերադարձի արդյունքում: Ելքեր չեն գրանցվել: Մնացորդը կազմել է 14 մլն 941 հազար 614 դրամ:

Միեւնույն ժամանակ «Ռեֆորմիստներ», «Քոչարի ազգային վերածնունդ եւ Ազգի զարթոնք», Քրիստոնեա-ժողովրդավարական եւ «Ալյանս» առաջադիմական ցենտրիստական կուսակցությունները հաշվետու ժամանակահատվածում մուտքեր եւ ելքեր չեն ունեցել: Նրանց հաշիվների մնացորդները համապատասխանաբար կազմել են 3 հազար, 0, 3 հազար 301 եւ 34 հազար 820 դրամ:

Այսպիսով, ԿԿՀ հրապարակած տվյալներից պարզ է դառնում, որ նախընտրական շրջանում ամենամեծ ֆինանսական շարժը գրանցվել է «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության մոտ, որին հաջորդում են «Ուժեղ Հայաստան»-ը, ՀՅԴ-ն եւ «Միասնության թեւեր»-ը:

Ա. ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀԵՌԱԽՈՍԱՔՐՈՒՅՑ ԵՆ ՈՒՆԵՑԵԼ

ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը հեռախոսազրույց է ունեցել Լատվիայի ԱԳ նախարար Բայբա Բրաժեի հետ: Զրուցակիցները քննարկել են Հայաստանի եւ Լատվիայի միջեւ երկկողմ գործընկերության շարունակական ամրապնդման հարցեր: Կարեւորվել է տնտեսական ոլորտում փոխգործակցության ակտիվացումը՝ հաշվի առնելով քաղաքական մակարդակում այդ հարցում արտահայտված պատրաստակամությունը: Արարատ Միրզոյանը եւ Բայբա Բրաժեն մտքեր են փոխանակել ՀՀ-ԵՄ գործընկերության ռազմավարական օրակարգի իրականացման ուղղությամբ աշխատանքներին: Հայաստանի եւ Լատվիայի ԱԳ նախարարներն անդրադարձ են կատարել ժողովրդավարական գործընթացները թիրախավորող հիբրիդային տարատեսակ գործողություններին եւ դրանց արդյունավետ հակազդմանը:

ԿԻՆ ՄԵՂԱԴՐՅԱԼՆԵՐ

ՈՐՈՇՈՒՄՆԵՐ՝ «ՈՒԺԵՂ ՀԱՅԱՍՏԱՆ»-Ի ՀԱՄԱԿԻՐՆԵՐԻ ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾԵՐՈՎ

Լեւոն Վարշամյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա Գ. Գ. «Մեր ձեւով» շարժման կողմից 2026 թվականի հունվար ամսից հետո իրականացված հավաքներին եւ Սամվել Կարապետյանի դատական նիստերի ժամանակ տեղի ունեցած ակցիաներին մասնակցելու նպատակով, նյութապես շահագրգռել է՝ համաձայնություն ձեռք բերելով որպես աշխատավարձ գումար փոխանցելու վերաբերյալ:

Մասնավորապես՝ Լեւոն Վարշամյանի եւ Գ. Գ. միջեւ ձեռք բերված համաձայնության հիման վրա հավաքներին մասնակցելու նպատակով «Մեր ձեւով ազգային արժեքների պահպանություն» ՀԿ-ից Գ. Գ. պատկանող բանկի ... բանկային հաշվեհամարին 11.02.2026 թվականին փոխանցվել է 204.545 ՀՀ դրամ, իսկ 10.03.2026 թվականին՝ 300.000 ՀՀ դրամ գումարներ: Այս գործով նածխաքննության ավարտ է հայտարարվել ու գործը ուղարկվել է դատարան:

Կարապետ Խալաթյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ հոր՝ Ա.Խ.-ի կազմակերպմամբ «Ուժեղ Հայաստան» կուսակցությունների դաշինքի կողմից կազմակերպված հավաքին մասնակցելու նպատակով նյութապես շահագրգռել է անչափահասներ Ս.Թ.-ին, Ա.Ա.-ին, Ա.Ա.-ին եւ Խ.Խ.-ին: Այս գործով նախաքննության ավարտ է հայտարարվել ու գործը ուղարկվել է դատարան:

Կալին Մանուչարյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա 2026 թվականի մայիսի 12-ին Տավուշի մարզի Բերդ համայնքի Մշակույթի տանն «Ուժեղ Հայաստան» կուսակցության քարոզարշավին մասնակցելու նպատակով, հանդիսանալով «Բերդի կոմունալ ծառայություն» ՀՈԱԿ-ում՝ որպես աղբահանության եւ սանմաքրման ոլորտի համակարգող, օգտագործելով իր ծառայողական եւ իշխանական լիազորությունները, շանտաժի միջոցով, այն է՝ «Ուժեղ Հայաստան» կուսակցության քարոզարշավին չներկայանալու եւ կուսակցությանը չսատարելու դեպքում՝ «Բերդի կոմունալ ծառայություն» ՀՈԱԿ-ի հավաքարար Թ. Մ. աշխատանքից ազատելու սպառնալիքով, հարկադրել է վերջինիս մասնակցել 2026 թվականի մայիսի 12-ին Տավուշի մարզի Բերդ համայնքի Մշակույթի տանն «Ուժեղ Հայաստան» կուսակցության քարոզարշավին, որպիսի պայմաններում Թ. Մ. հարկադրաբար ներկայացել եւ մասնակցել է հիշյալ հավաքին: Այս գործով նախաքննության ավարտ է հայտարարվել ու գործը ուղարկվել է դատարան:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ

ՁԵՎԱԿԱՆ ԱՃՈՒՐԴՆԵՐՈՎ ՕՏԱՐԵԼ Է

Գլխավոր դատախազությունը 2026 թվականի մայիսի 20-ին տեղեկացրել էր «Արարատցեմենտ» ընկերության մասնավորեցման գործընթացում հայտնաբերած մի շարք խախտումների մասին: Պետական (համայնքային) շահերի պաշտպանության շրջանակներում իրականացված ուսումնասիրության շրջանակներում, բացի նախորդիվ նշված խախտումներից, պարզվել է նաեւ, որ Արարատ համայնքի նախկին ղեկավար Ա.Բ.-ն, «Արարատցեմենտ» ՓԲ ընկերության աշխատակցի օժանդակությամբ իր պաշտոնական դիրքը ծառայության շահերին հակառակ օգտագործելով, խախտել է մի շարք օրենսդրական պահանջներ: Մասնավորապես, 2009 թվականի սեպտեմբերի 22-ին, ձեւական աճուրդների եղանակով, «Արարատցեմենտ» ՓԲ ընկերությանն է օտարել համայնքին որպես արոտավայր փոխանցված՝ 74.1 հա մակերեսով հողամասերը:

Դատախազը, պետական շահերի պաշտպանության իր լիազորություններն իրականացնելու շրջանակներում հայտնաբերելով առերեւույթ հանցանքի հատկանիշներ, 2026 թվականի մայիսի 27-ին ներկայացրել է հանցանքի մասին պատշաճ հաղորդում, որը հասցեագրվել է Հակակոռուպցիոն կոմիտեին՝ վարույթ նախաձեռնելու հարցը լուծելու համար:

Նույն օրը Դատախազության կողմից հայցադիմում է ներկայացվել Հակակոռուպցիոն դատարան՝ ընդդեմ Արարատ համայնքի, «Արարատցեմենտ» ՓԲ ընկերության եւ ընկերության աշխատակից Ա.Ա.-ի՝ 74.1 հա մակերեսով հողամասերի՝ 2009 թվականի սեպտեմբերի 22-ին տեղի ունեցած աճուրդներն անվավեր ճանաչելու եւ անվավերության հետեւանքներ կիրառելու պահանջով: «Արարատցեմենտ» ՓԲ ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող այլ գույքերի ձեռքբերման իրավաչափությունները պարզելու նպատակով Դատախազության ուսումնասիրություններն ընթացքի մեջ են:

Հիշեցնենք, որ Գլխավոր դատախազությունը 2026 թվականի մայիսի 5-ին գրություն է հասցեագրել ՀՀ Կառավարություն՝ առաջարկելով քննարկել ընկերությունում առկա խախտումները եւ դրանց հետեւանքները վերացնելու նպատակով պատշաճ վարչարարություն իրականացնելու, այդ թվում, օրինակ, ընկերությունում ժամանակավոր կառավարիչ նշանակելու նպատակահարմարությունը:

ԼՈՒՐԵՐ

ՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՆՐԱՄԱՄՆԵՐ

ArmLur.am-ի ձեռքում է հայտնվել Արմավիրի մարզի Նորապատ գյուղում տեղի ունեցած աղմկահարույց եռակի սպանության տեսագրությունը, որը նոր հարցադրումներ է առաջացնում դեպքի պաշտոնական եւ ոչ պաշտոնական վարկածների շուրջ: Հիշեցնենք, որ 2026 թվականի մայիսի 26-ին Նորապատ գյուղի գերեզմանատան տարածքում տեղի ունեցած կրակոցների հետեւանքով զոհվել էին երեք անձինք՝ 64-ամյա Սաշա Բաբայանը, 43-ամյա Մայիս Բաբայանը եւ 44-ամյա Խդր Բաբայանը: Բոլորն էլ ազգությամբ եզդիներ են:

Նախնական տեղեկությունների համաձայն՝ ազգությամբ եզդի տղամարդը իր մորը վիրավորելու կենցաղային հարցերի շուրջ ծագած վիճաբանության ընթացքում կրակոցներ էր արձակել, ինչի հետեւանքով երեք մարդ տեղում մահացել էր: Դեպքից հետո կրակոցներ արձակած անձը ներկայացել էր ոստիկանության Արմավիրի բաժին:

Սակայն ArmLur.am-ի ձեռքում հայտնված տեսագրությունը եւ համագյուղացիների պատմածը մի շարք հանգամանքների վերաբերյալ կասկածներ են առաջացնում: Մասնավորապես, տեսանյութի կադրերից երեւում է, որ սկզբում դեպքի վայրում եղել է միայն առաջին զոհը: Սպանվողը կարծես թե ձեռքերով աղերսում էր չսպանել իրեն, փորձում է փախչել եւ թաքնվել: Հետո ենթադրաբար, համենայնդեպս տպավորություն է, որ մայրն է թաքստոցը ցույց տալիս որդուն, ով տեղում սպանում է նրան: Բայց նաեւ երեւում է, որ ենթադրաբար մայրը կարծես թե հարվածում է սպանվածին: Համագյուղացիների նկարագրելով, առաջին զոհը մինչ սպանվելը հասցնում է զանգահարել ենթադրաբար հորը եւ օգնություն խնդրել: Սակայն մինչեւ դեպքի վայր են հասել հայրը եւ եղբայրը, նա արդեն սպանված է եղել: Դրանից հետո նույն անձի կողմից կրակոցների զոհ են դառնում նաեւ հայրն ու մյուս որդին: Կադրերից ակնհայտ երեւում է, որ կողմերը իրար լավ են ճանաչում եւ թշնամանք կա միմյանց նկատմամբ: Armlur.am-ի հետ զրույցներում մի շարք համագյուղացիներ, որոնք չեն ցանկացել ներկայանալ, տարակուսանք հայտնեցին այն մասով, որ դեպքը հանրային տիրույթում ներկայացվել է ինքնապաշտպանության համատեքստում, թե միջադեպի պատճառը մոր նկատմամբ հարձակումն է եղել: Նրանց դիտարկմամբ՝ տեսանյութից էլ երեւում է, որ սպանված անձինք միասին չեն եղել, միայն մի որդին է եղել, իսկ մյուս երկու տղամարդիկ հետո են եկել: Ավելին՝ կրակոցներ արձակած անձը զինված է եղել ավտոմատ զենքով, ոչ թե որսորդական:

«Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ գյուղում լարված մթնոլորտ է տիրում այժմ: Գյուղում մարդիկ պատմեցին մեզ, որ նույն ընտանիքի 3 տղամարդկանց հոգեհանգստի օրը դիակների դեմքերը փակ են եղել, ինչը ենթադրել է տալիս, որ նաեւ դիակապտություն է տեղի ունեցել. կրակոցներից բացի վնասել են մարմինները: Համագյուղացիների մի մասը մտավախություն ունի, որ տեղի ունեցած մեծ ողբերգությունից հետո կարող են խորանալ հակասությունները, եւ չեն բացառում նաեւ վրեժխնդրության գործողությունների վտանգը:

Դեպքի բոլոր հանգամանքները պարզելու ուղղությամբ նախաքննությունը շարունակվում է:

Հ. Գ. Եթե իրավապահները բացի ընդդիմադիր շտաբներով զբաղվելուց նաեւ հանցագործությունների կանխմամբ եւ նախականխմամբ զբաղվեին, գուցե 1 ընտամիից 3 զոհ չէին լինեն: Իրավապահները կտիրապետեին օպերատիվ իրավիճակին եւ երբեմնի մտերիմ համագյուղացիների միջեւ առկա թշնամանքի մասին տեղեկությունը կիմանային: Վստահաբար հնարավոր կլիներ կանխել սպանությունները:

ՎԵՐԱԴԱՐՁՎԵԼ Է 2 ՏԱՐԱԾՔ

Տավուշի մարզի դատախազության կողմից պետական (համայնքային) շահերի պաշտպանության հայց հարուցելու լիազորության շրջանակում կատարված ուսումնասիրություններով պարզվել է՝ Աչաջուր բնակավայրի Մշակույթի տան առաջին հարկի 31,9 քմ մակերեսով տարածքը, «Գնահատման գործունեության մասին» ՀՀ օրենքի պահանջների խախտմամբ, ամսական 2000 դրամով հանձնվել է վարձակալության: Գետահովիտ բնակավայրի Մշակույթի տան 9,2 քմ մակերեսով տարածքը, «Գնահատման գործունեության մասին» ՀՀ օրենքի պահանջների խախտմամբ, ամսական 5000 դրամ վարձավճարով հանձնվել է վարձակալության: Դատախազական ներգործության արդյունքում՝ Իջեւան համայնքի կողմից վարձակալության պայմանագրերը լուծվել են, վարձակալության իրավունքի պետական գրանցումները չեղարկվել են եւ Իջեւան համայնքի տիրապետմանն ու օգտագործմանն են վերադարձվել Աչաջուր եւ Գետահովիտ բնակավայրերի մշակույթի տներում գտնվող՝ 31,9 քմ եւ 9,2 քմ մակերեսով անշարժ գույքերը:

● *Ըստ վիճակագրական տվյալների՝ մայիսի 25-ից հունիսի 1-ը հայտնաբերվել է ոչ սթափ 160 վարորդ:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԴ

ԱՎՏՈԼՎԱՑՄԱՆ ԱՊՕՐԻՆԻ ԿԵՏ

Հաղարծին գյուղի բնակիչները 2021թ. փետրվարին լրագրողիս բողոքել էին, որ Հաղարծնի բնակիչ, Դիլիջան համայնքի ավագանու անդամ Դավիթ Սարգսյանը գյուղի հարավային ծայրին, գյուղը շրջանցող, սողանքի պատճառով չգործող միջպետական ավտոճանապարհի վրա ապօրինի կերպով, առանց շինթույլտվության ավտոլվացման կետ է կառուցել, այն աշխատեցնում է:

Բողոքողները տարակուսանք էին հայտնել, որ ապօրինի կառույց սարքածը Դիլիջան համայնքի ավագանու անդամ է, ով ինքը պետք է պայքարեր համայնքում ապօրինությունների դեմ: Բնակիչները հայտնել էին, որ Դավիթ Սարգսյանն Սահմանադրության հանրաքվեի (որը չկայացավ) ժամանակ եղել է գյուղում «Այո»-ի տեղի շտաբի ղեկավարը: 2021թ. փետրվարի 19-ին Հաղարծին գյուղում հանդիպեցի Դավիթ Սարգսյանի եւ նրա եղբոր հետ: Նրանք այդ գյուղում ավտոպահեստամասերի, շինանյութերի խանութներ ունեն եւ քարե բլոկների արտադրություն: Վերհիշյալ ավտոլվացման կետը կառուցված է Հայաստան-Վրաստան միջպետական ավտոճանապարհից վտանգավոր, 3-4 մետր հեռավորությամբ: Դավիթ Սարգսյանն այն ժամանակ ասաց, որ ավտոլվակացման կետը գրանցված է անհատ ձեռներեց, իր եղբայր Սասուն Սարգսյանի անվամբ, ինքը բաժնետեր է: Նա սկզբում ասաց, որ ավտոլվացման կետը գործում է մեկուկես կամ երկու տարի: Երբ ասացի, թե այդ ապօրինի կառույցը սարքվել է Նիկոլ Փաշինյանի իշխանության օրոք, Դավիթ Սարգսյանը, իրեն հերքելով, ասաց, որ ավտոլվացման կետը վաղուց է կառուցված: Նա նաեւ պահանջեց, որպեսզի ավտոլվացման կետի մասին հոդվածում չնշվի իր՝ ավագանու անդամ լինելը: Նա ցույց տվեց Դիլիջան համայնքի ղեկավար Արմեն Սանթրոսյանի՝ 2019թ. օգոստոսի գրությունը, որով համայնքի ղեկավարը հայտնում էր, որ իր առաջին իսկ պահանջի դեպքում ապօրինի կառուցված ավտոլվացման կետը պետք է քանդվի: 2019թ. Դիլիջան համայնքի ղեկավար Արմեն Սաթրոսյանը նրանց գրավոր զգուշացրել է, որ կառույցը Դիլիջան համայնքի ղեկավարի համապատասխան ակտի հիման վրա տեղադրվել է որպես ժամանակավոր ծածկ՝ առաջին իսկ անհրաժեշտության դեպքում ապամոնտաժելու պայմանով՝ ելնելով համայնքի գերակա շահերից: Համայնքի ղեկավարի կողմից որոշում է կայացվել ինքնակամ կառույց իրականացնող անձին վարչական պատասխանատվության ենթարկելու մասին, տուգանք է կիրառվել 400 հազար դրամի չափով: Ապօրինի սարքված ավտոլվացման կետն անցած 7 տարում անխափան գործում է՝ հարստացնելով Դավիթ Սարգսյանի ընտանիքին: Սակայն Դիլիջան համայնքի ղեկավար, ՔՊ կուսակցության Դիլիջանի տարածքային կազմակերպության ղեկավար Դավիթ Սարգսյանի ընտանիքի ապօրինությունը չեն նկատում, ավտոլվացման կետը շահույթներ է բերում բազում բիզնեսներ ունեցող այդ ընտանիքին:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ԻՆՉ Է ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԵԼ

ՄԻ ՔԱՆԻ ԱՄՍՎԱ ՊԱՏԳԱՄԱՎՈՐ

Ազգային Ժողովի «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության նոր պատգամավոր Լուսինե Աքմաքչյանի մուտքը խորհրդարան արդեն իսկ քաղաքական քննարկումների թեմա է դարձել: Վլադիմիր Վարդանյանի մանդատի դադարեցումից հետո պատգամավորական մանդատ ստացած Աքմաքչյանը խորհրդարան մտավ մի փուլում, երբ քաղաքական օրակարգն ամբողջությամբ թեժ ընտրական զարգացումների մեջ է, իսկ խորհրդարանի աշխատանքը՝ փաստացի կիսադադարեցված:

ArmLur.am-ը ուսումնասիրել է Լուսինե Աքմաքչյանի՝ պաշտոնը ստանձնելու օրվա դրությամբ ներկայացված հայտարարագիրը, որը բավական համեստ պատկեր է ներկայացնում: Ըստ հայտարարագրի՝ Աքմաքչյանը որպես անշարժ գույք նշել է միայն Լոռու մարզի Վանաձոր քաղաքում գտնվող բազմաբնակարան շենքի բնակարան, որը համատեղ սեփականություն է եւ ձեռք է բերվել դեռեւս 2010 թվականին՝ գնման միջոցով: Տրանսպորտային միջոց չկա: Բանկային ավանդ՝ 1 միլիոն դրամ: Բանկային հաշիվների մնացորդների կամ կանխիկ դրամական միջոցների վերաբերյալ տվյալներ չեն ներկայացվել: Հայտարարագրված եկամուտը կազմել է 1 մլն 74 հազար 962 դրամ, որը գոյացել է աշխատանքի վարձատրությունից՝ «Միասնական սոցիալական ծառայություն»-ում զբաղեցրած պաշտոնից:

Ո՞վ է Լուսինե Աքմաքչյանը: Նա ծնվել է 1976 թվականի դեկտեմբերի 23-ին Վանաձորում: Կրթություն ստացել է Վանաձորի պետական մանկավարժական ինստիտուտում, այնուհետեւ նաեւ Երեւանի պետական համալսարանում՝ սոցիալական աշխատանքի մասնագիտությամբ: Վերջին տարիներին ընդգրկված է եղել նաեւ քաղաքական առաջնորդության ծրագրերում:

Մասնագիտական կենսագրությունը հիմնականում կապված է սոցիալական ոլորտի հետ. աշխատել է պետական եւ հասարակական տարբեր կառույցներում՝ «Հայանտառ»-ից մինչեւ «Օրրան», «Առաքելություն Հայաստան» եւ COAF: 2023-2026 թվականներին ղեկավարել է Միասնական սոցիալական ծառայության Վանաձորի տարածքային կենտրոնը: «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության անդամ է 2021 թվականից:

Այժմ արդեն նա ԱԺ պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովում է եւ իշխող խմբակցության կազմում: Սակայն այստեղ ամենահետաքրքիր հարցը քաղաքական չէ միայն՝ ժամանակի հարցն է:

Աքմաքչյանը պատգամավորական մանդատը ստացել է ապրիլի 2-ին, բայց քաղաքական օրացույցը նրա օգտին չէ: Խորհրդարանում արդեն իսկ նկատվում է քվորումի լրջագույն խնդիր: Նիստերը հաճախ չեն կայանում կամ հետաձգվում են: Մյուս կողմից՝ մեկնարկում է ակտիվ նախընտրական շրջան, իսկ դրանից հետո խորհրդարանը գնալու է արձակուրդ: Ստացվում է բավական ուշագրավ պատկեր. նոր պատգամավորն Ազգային Ժողով է մտնում մի փուլում, երբ խորհրդարանական լիարժեք աշխատանքի համար ժամանակ գրեթե չի մնում:

Փաստացի հարց է առաջանում՝ արդյոք Լուսինե Աքմաքչյանը կհասցնի ամբողջ ծավալով ներգրավվել օրենսդրական գործընթացներում, թե նրա պատգամավորական գործունեությունը կմնա առավելապես խորհրդանշական կարգավիճակում: Մի բան ակնհայտ է. մանդատը ստացել է, հայտարարագիրը ներկայացրել է, հանձնաժողովում ընդգրկվել է, բայց թե որքան իրական քաղաքական մասնակցություն կունենա այս կարճ ժամանակահատվածում՝ դեռ մեծ հարցականի տակ է: Եւ մինչ իշխանական թիմը շարունակում է համալրել խորհրդարանական շարքերը, հանրության համար բաց է մնում գլխավոր հարցը՝ նոր պատգամավորները խորհրդարան մտնում են աշխատելու, թե պարզապես քաղաքական անցումային փուլը լրացնելու համար:

ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅՏԱԳՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Մեկնարկում է 2026-2027 ուսումնական տարում առաջին դասարան հաճախող երեխաների էլեկտրոնային հայտագրումը՝ երեք փուլով:

Փուլ առաջին

Հունիսի 8-ին՝ ժամը 09:00-ից մինչեւ հունիսի 21-ը՝ ժամը 24:00-ը ներառյալ, հայտագրումը բաց կլինի արտոնություններ ունեցող երեխաների համար (արտոնությունները տեսանելի կլինեն համակարգում):

Արտոնություններից կարող են օգտվել.

-տվյալ դպրոցում սովորող քույր, եղբայր ունեցող երեխաները

-տվյալ դպրոցի աշխատակիցների երեխաները

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ տվյալ դպրոցից մինչեւ տուն սպասարկման հետիոտնային հասանելիության շառավղով բնակվող ներքոնշյալ խմբերի երեխաները՝

ընտանիքների անապահովության գնահատման համակարգում ընդգրկված ընտանիքների երեխաները կամ «Պետական նպաստների մասին» օրենքով եւ ՀՀ կառավարության որոշմամբ հաստատված կարգով ընտանիքի մեկ հաշվարկային անդամի՝ անապահովության նպաստ ստանալու իրավունք տվող սահմանային շեմի 160 տոկոսի արժեքից ցածր ամսական եկամուտ ունեցող եւ ընտանիքի անապահովության գնահատման կարգով սոցիալապես անապահով ճանաչված ընտանիքների երեխաները, խնամակալության տակ գտնվող երեխաները

հաշմանդամություն ունեցող կամ հաշմանդամություն ունեցող ծնողների երեխաները:

Արտոնությունից կարող են օգտվել նաեւ տվյալ ոլորտային օրենսդրությանը համապատասխան՝ ՀՀ տարածքում ներքին գործուղման հետեւանքով առնվազն 6 ամիս ժամկետով այլ բնակավայր տեղափոխված պետական համակարգի աշխատողների երեխաները, եթե ծնողը (նրա օրինական ներկայացուցիչը) մինչեւ առաջին դասարան հայտագրման մեկնարկի օրը՝ հունիսի 8-ը, ԿԳՄՍՆ էլեկտրոնային հասցեին (secretariat@escs.am) ուղարկել է դիմում եւ համապատասխան տեղեկանքներ՝ ըստ սահմանված կարգի: Դիմումը եւ տեղեկանքը ստանալուց հետո նախարարությունը, ստուգելով ներկայացված տեղեկանքի հավաստիությունը, առաջնահերթությունից օգտվելու վերաբերյալ դիմումը բավարարելու դեպքում համապատասխան որոշումն ուղարկում է ԿՏԱԿ, չբավարարելու դեպքում՝ պատասխանը գրավոր տրամադրում դիմումատուին: ԿՏԱԿ-ը վերը նշված ժամկետում՝ հունիսի 8-21-ը ներառյալ, իրականացնում է սովորողի հայտագրումը՝ հիմք ընդունելով ԿԳՄՍՆ որոշումը: Նշված արտոնությունները վերաբերում են ինչպես հայերենով, այնպես էլ ռուսերենով ուսուցմամբ դասարաններ հաճախող երեխաներին:

Փուլ երկրորդ

Հունիսի 23-ին՝ ժամը 09:00-ից, առաջին դասարանցիների հայտագրման գործընթացը կիրականացվի ընդհանուր հիմունքներով՝ հայերենով ուսուցմամբ դասարանների ընդունելության համար, այդ թվում՝ օտարերկրյա քաղաքացիների, երկքաղաքացիների, քաղաքացիություն չունեցող անձանց (նրանց օրինական ներկայացուցիչների) համար: Հայատագրում կիրականացվի նաեւ այն երեխաների համար, որոնց ծնողներից մեկը պատկանում է նշված խմբերից որեւէ մեկին, իսկ մյուսը ՀՀ քաղաքացի է: Համակարգը բաց է նաեւ ազգային փոքրամասնություններին պատկանող երեխաների համար, որոնց ծնողները ցանկանում են երեխաներին հայտագրել հայերենով ուսուցմամբ դասարաններում:

Փուլ երրորդ

Հունիսի 30-ին՝ ժամը 09:00-ից, հայտագրում կիրականացվի ռուսերենով ուսուցմամբ դասարանների ընդունելության համար, որը նախատեսված է օտարերկրյա քաղաքացիների, երկքաղաքացիների, քաղաքացիություն չունեցող անձանց (նրանց օրինական ներկայացուցիչների) երեխաների համար: Այս կարգավորումը գործում է նաեւ այն երեխաների համար, որոնց ծնողներից մեկը ՀՀ քաղաքացի է, մյուսը՝ ոչ, ինչպես նաեւ ծնողներից մեկն ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչ է, եւ երեխան պետք է հաճախի ռուսերենով ուսուցմամբ դասարան՝ ծնողների ընտրությամբ:

Երկյակ, եռյակ, քառյակ եւ ավելի երեխաներից առնվազն մեկի հայտագրումը որեւէ հանրակրթական ուսումնական հաստատությունում ապահովում է մյուս երեխաների ընդունելությունը նույն հաստատություն՝ անկախ լիցենզիայով տրված տեղերի քանակից:

Հայտագրումը կշարունակվի ողջ ուսումնական տարվա ընթացքում:

Հայտագրումն իրականացվելու է առցանց՝ երկու քայլով:

Քայլ 1 - Մուտք գործեք https://my.emis.am/ հարթակ եւ բացեք օգտատիրոջ էջը: Մանրամասն քայլերը ներկայացված են «Գրանցում my.emis.am» տեսաուղեցույցում:

Քայլ 2 - Եթե արդեն անցել եք նույնականացում եւ https://my.emis.am/ հարթակում ունեք էջ, ապա սպասեք հայտագրման մեկնարկին, որպեսզի ընտրեք դպրոցը: Հայտագրման քայլերը ներկայացված են «Առաջին դասարանի հայտագրում» տեսաուղեցույցում:

Հայտագրվելու, դպրոցի տնօրենին դիմում ներկայացնելու, ինչպես նաեւ դպրոցի հետ պայմանագիր կնքելու ողջ գործընթացը թվայնացված է եւ հնարավոր է իրականացնել Կրթության կառավարման տեղեկատվական համակարգում ծնողի կողմից ստեղծված էջով:

Հաշվի առնելով, որ գրանցումը ժամանակատար է, խորհուրդ ենք տալիս մինչեւ հայտագրման մեկնարկը գրանցվել եւ համակարգում անցնել նույնականացում, որից հետո հնարավոր կլինի երեխային հայտագրել նախընտրելի դպրոցում:

● *Տարբեր կասկածանքներով ձերբակալվել ու համայնքային ոստիկանության բաժիններ է տարվել 98 անձ:*

ԿՐԹԱԿԱՆ

ԲԱՆԿԵՐ

«ՄԱՆԿԱԿԱՆ» ԱՎԱՆԴ

Երեխաների պաշտպանության միջազգային օրվա առթիվ Հայէկոնոմբանկը բարձրացրել է «Մանկական» ժամկետային ավանդի տարեկան անվանական տոկոսադրույքները դրամով եւ ԱՄՆ դոլարով կատարվող ներդրումների համար.

Արժույթ՝ Տարեկան անվանական տոկոսադրույք (փաստացի եկամտաբերություն)

AMD 9.5 %

USD 4.5 %

Առաջարկը գործում է 01.06.2026-31.08.2026թթ. ժամանակահատվածում՝ 16 տարեկանը չլրացած երեխաների անվամբ ներդրվող «Մանկական» ժամկետային ավանդ(ներ)ի համար: Ակցիայի շրջանակում առնվազն 1 մլն դրամ (կամ համարժեք ԱՄՆ դոլար) չափով «Մանկական» ժամկետային ավանդ ներդնող հաճախորդներին Բանկը տրամադրում է նաեւ այլ արտոնություններ՝

- Visa Guru Travel վճարային քարտ՝ 0 դրամ տարեկան սպասարկման վճարով (1-ին տարվա համար),
- «ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ ճանապարհորդության ապահովագրություն (TR Whole World AEB)՝ 4,000 դրամ սակագնով,
- Տեղեկանքների տրամադրում՝ 50% զեղչված սակագնով,
- անհատական պահատեղ՝ 30% զեղչված սակագնով (բացառությամբ Գլխամասային գրասենյակում գտնվող պահատեղերի):

Ավանդը հնարավոր է.

- ներդնել Բանկի Գլխամասային գրասենյակում եւ մասնաճյուղերում (բացառությամբ «ԱՐԱՐԱՏՅԱՆ» եւ «ՍԻԼԱՉԻ» մասնաճյուղերի),
- համալրել AEB Mobile/Online համակարգերի միջոցով:

86 86 | aeb.am

Հայէկոնոմբանկը վերահսկվում է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից (Գ)

«ՅՈՒՆԻՍՊՈՐՏԸ»՝ ՉԵՄՊԻՈՆ

«Յունիսպորտը» դարձավ ֆուտզալի Հայաստանի Բարձրագույն խմբի չեմպիոն: Փլեյ-օֆֆի եզրափակիչի երկրորդ խաղում եւս «Յունիսպորտ»-ը հաղթեց «Երեւան»-ին: Հանդիպումն ավարտվեց 8-3 հաշվով: Լինելով ակումբի գլխավոր հովանավորը՝ Յունիբանկը կշարունակում է աջակցել «Յունիսպորտին» եւ նպաստել Հայաստանում սպորտի զարգացմանը՝ որպես կորպորատիվ սոցիալական պատասխանատվության քաղաքականության կարեւոր ուղղություն: Բանկը նպաստում է պրոֆեսիոնալ սպորտի զարգացմանը՝ ստեղծելով հնարավորություններ մարզիկների համար՝ բացահայտելու իրենց ներուժը եւ հասնելու նոր հաջողությունների:

Յունիբանկում վստահ են, որ սպորտի մեջ ներդրումները նպաստում են ոչ միայն մարզական ձեռքբերումներին, այլեւ առաջնորդության զարգացմանն ու ազգային հպարտության ամրապնդմանը:

Յունիբանկը շնորհավորում է «Յունիսպորտի» խաղացողներին, մարզիչներին եւ երկրպագուներին այս նշանակալի նվաճման կապակցությամբ եւ մաղթում նոր հաղթանակներ ու փայլուն ելույթներ միջազգային մրցաշարերում: *(Գ)*

KOREEZ-TELCELL-PHYSMATH

Գ

ԿՐԹԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄ, ՈՐԸ ՁԵՎԱՎՈՐՈՒՄ Է ԱՊԱԳԱՆ

Կրթական շարժում, որը ձեւավորում է ապագան. Koreez-Telcell-PhysMath մաթեմատիկական մրցույթը մոտենում է իր վճռորոշ փուլին. 120 լավագույն աշակերտները մրցեցին եզրափակչում: Մրցույթը միավորել էր ավելի քան 15,000 աշակերտի Երեւանից եւ Հայաստանի 10 մարզերից:

Երկու առցանց փուլերից եւ կիսաեզրափակչում ծավալված լարված պայքարից հետո եզրափակիչ փուլ են անցել 120 աշակերտ՝ յուրաքանչյուր տարիքային խմբի լավագույն տասնյակները՝ 1-12-րդ դասարաններից:

Koreez կրթական ծրագրի հիմնադիր Սուրեն Ալոյանն ընդգծեց, որ սա արդեն պարզապես կրթական մրցույթ չէ, այլ իրական մաթեմատիկական շարժում, որն ընդգրկում է ամբողջ հանրապետությունը, եւ որի մեծ աջակիցը դարձել է նաեւ իրենց գործընկերը՝ Telcell-ը:

«Արդեն երկրորդ տարին է, ինչ Telcell ընկերությունը դարձել է Koreez-ի ռազմավարական գործընկերը, եւ դա մեզ հնարավորություն տվեց շատ ավելի մեծ մասշտաբներով իրականացնել մրցույթը: Ամեն տարի աճում են աշակերտների հետաքրքրությունն ու մասնակցությունը: Եվ ամենակարեւորը՝ սա պարզապես օլիմպիադա չէ, սա մրցույթ է, որտեղ յուրաքանչյուր աշակերտ, անկախ իր առաջադիմությունից, կարող է մասնակցել, որովհետեւ մեր գլխավոր նպատակն ու առաքելությունը մաթեմատիկական առարկաների նկատմամբ սեր սերմանելն է»,- ասաց Ալոյանը:

Telcell-ի գլխավոր տնօրեն Արտյոմ Ղազարյանի խոսքով՝ Telcell-ի համար այս համագործակցությունը պարզապես հովանավորություն չէ: Սա ռազմավարական ներդրում է այն երեխաների ապագայի մեջ, որոնք վաղը ձեւավորելու են Հայաստանի տեխնոլոգիական եւ գիտական ներուժը:

«Telcell ընկերությունը, լինելով տեխնոլոգիական եւ դասական ֆինտեխ ընկերություն, ինչպես նաեւ այդ ոլորտների առաջատար կազմակերպություններից մեկը, խիստ կարեւորում է որակյալ կրթությունը: Մենք համարում ենք, որ ռազմավարական տեսանկյունից կրթությունը կարեւորագույն նշանակություն ունի թե՛ երկրի, թե՛ կազմակերպության համար: Մեզ համար չափազանց կարեւոր է ստեղծել պայմաններ, լուծումներ, մրցույթներ եւ այլ հնարավորություններ՝ աջակցելու եւ օգնելու թե՛ ուսուցիչներին, թե՛ դպրոցականներին, իսկ Koreez-ը ստեղծում է այդ բոլոր հնարավորությունները»,- ասաց Ղազարյանը:

Մրցույթի կազմակերպիչները վստահեցրին, որ այս մասնակիցներից շատերը ապագայում դառնալու են գիտության, տեխնոլոգիաների եւ նորարարության ոլորտների առաջատար ներկայացուցիչներ, քանի որ եզրափակիչ փուլ հասած աշակերտներն արդեն իսկ ապացուցել են իրենց բարձր մակարդակը:

«Մեր դպրոցն ունի այնպիսի ձեւաչափ, որը հնարավորություն է տալիս հանրապետության ողջ տարածքից բացահայտել լավագույն աշակերտներին եւ լավագույն մասնագետների միջոցով ապահովել նրանց կրթությունը: Koreez շարժումը նույնպես կարեւոր է այդ առումով, որովհետեւ կրկին բացահայտում ենք լավագույններին: Եզրափակիչ փուլից յուրաքանչյուր դասարանից երեք աշակերտի իրավունք ենք տվել հարցազրույցի միջոցով ընդունվել մեր դպրոց»,- հավելեց ԵՊՀ-ին առընթեր Ա.Շահինյանի անվան ֆիզիկամաթեմատիկական հատուկ դպրոցի տնօրեն Արման Սարգսյանը:

Ծրագրի մասնակից երեխաների ծնողները եւս վստահեցրին, որ մրցույթն արդեն մի քանի տարի է ոգեւորում է երեխաներին եւ մեծացնում նրանց հետաքրքրությունը մաթեմատիկայի նկատմամբ:

Աշակերտներից շատերը մրցույթին մասնակցում են ոչ առաջին անգամ եւ վստահ են, որ իրենց սիրելի առարկայի շրջանակում անցկացվող այս մրցույթը ուժերը փորձելու հիանալի հնարավորություն է:

Կազմակերպիչների համոզմամբ՝ Koreez-Telcell-PhysMath մրցույթը շարունակում է ձեւավորել նոր կրթական մշակույթ Հայաստանում, որտեղ մաթեմատիկան դառնում է ոչ միայն առարկա, այլեւ ապագայի հնարավորություն:

«ԹԵԼ-ՍԵԼ» ԲԲ ընկերությունը վերահսկվում է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից

ԱՐԴՇԻՆԲԱՆԿՆ ԸՆԴԼԱՅՆՈՒՄ Է

Գ

Օրերս կայացավ «Plug Into Growth» խորագրով միջոցառումը, որը կազմակերպվել էր Արդշինբանկի եւ Վերակառուցման եւ զարգացման եվրոպական բանկի (EBRD) համագործակցությամբ՝ Հայաստանում կանաչ տնտեսության ֆինանսավորման ծրագրի (GEFF) շրջանակներում, Կանաչ կլիմայի հիմնադրամի (GCF) եւ Կլիմայի ներդրումային հիմնադրամի (CIF) աջակցությամբ:

Միջոցառման նպատակն էր ներկայացնել բիզնեսի համար հասանելի կանաչ ֆինանսավորման նոր հնարավորությունները եւ խթանել Հայաստանում կայուն ու էներգաարդյունավետ լուծումների ներդրումը:

Միջոցառումը համախմբել էր Արդշինբանկի հաճախորդներին, բիզնես համայնքի ներկայացուցիչներին եւ ոլորտային փորձագետներին: Քննարկվել են էլեկտրամոբիլության, էլեկտրական մեքենաների լիցքավորման կայանների, արեւային էներգետիկ համակարգերի եւ էներգաարդյունավետ տեխնոլոգիաների ներդրման գործնական հնարավորություններն ու ֆինանսավորման հասանելի գործիքները:

GEFF-ը Հայաստանում ծրագրի ղեկավարի տեղակալ Անդրո Բութխուզին իր ելույթում նշեց, որ GEFF ծրագիրը, որը նախաձեռնել եւ իրականացնում է Վերակառուցման եւ զարգացման եվրոպական բանկը (EBRD), օգնում է տեղական բիզնեսներին ներդրումներ կատարել կանաչ տեխնոլոգիաներում՝ տեղի գործընկեր ֆինանսական հաստատությունների միջոցով:

Նրա խոսքով՝ ծրագիրը հատկապես գրավիչ է այնպիսի պահանջված ներդրումների համար, ինչպիսիք են արեւային ֆոտովոլտային կայանները, արեւային ջրատաքացման համակարգերը, էլեկտրական մեքենաները, էլեկտրական մեքենաների լիցքավորման ենթակառուցվածքները եւ էներգիայի պահպանման մարտկոցները:

«Արդշինբանկը վերջերս միացավ GEFF ծրագրին՝ որպես գործընկեր ֆինանսական հաստատություն եւ հենց սկզբից ակտիվորեն աջակցում է այն հաճախորդներին, որոնք ցանկանում են ներդրումներ կատարել տարբեր կանաչ տեխնոլոգիաներում:

Այսպիսով, Արդշինբանկի հետ համատեղ, մեր ակնկալիքներն են՝ կանաչ ներդրումները դարձնել հնարավորինս մատչելի, ավելացնել կանաչ վարկերի քանակը, բարձրացնել հաճախորդների իրազեկվածությունը եւ ֆինանսավորման հետ մեկտեղ, նրանց տրամադրել նաեւ տեխնիկական աջակցություն:

Կանաչ ներդրումները բիզնեսի համար ոչ միայն շրջակա միջավայրի պահպանությանն ուղղված քայլ են, այլ նաեւ խելացի բիզնես որոշում: Էներգաարդյունավետ լուծումների ներդրումը թույլ է տալիս նվազեցնել գործառնական ծախսերը, նվազեցնել կախվածությունը ավանդական էներգիայի աղբյուրներից եւ բարձրացնել բիզնեսի մրցունակությունը»,-նշեց Անդրո Բութխուզին:

Բանկի Կորպորատիվ բիզնեսի վերլուծական վարչության պետ Արմինե Մելիքյանի խոսքով ծրագրի շրջանակում հաճախորդները կարող են օգտվել ոչ միայն ֆինանսավորումից, այլեւ cashback խրախուսման հնարավորությունից:

«Այս ծրագրի առավելություններից մեկը ֆինանսական խթանի առկայությունն է: Կան վարկավորման նպատակներ, որոնց դեպքում հաճախորդները կարող են ստանալ 10-15% խթան եւ հետագայում այն ուղղել բիզնեսի զարգացման եւ ընդլայնման այլ ծրագրերի իրականացմանը: Մենք տեսնում ենք, որ այս թեման այսօր մեծ հետաքրքրություն է առաջացնում բիզնեսների շրջանում», - նշեց Արմինե Մելիքյանը:

Այսուհետ GEFF ծրագրի չափանիշներին համապատասխանող Արդշինբանկի վարկառուները կարող են առցանց ծանոթանալ ծրագրի պայմաններին եւ լրացնել ֆինանսավորման հայտը բանկի պաշտոնական կայքում:

Բանկը վերահսկվում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ ArmLur.am կայքում գովազդ,հայտարարություն,հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ԱՆՑԿԱՑՎԵՑ

ԿԱՐԵՎՈՐ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԺՈՂՈՎ

Վերջերս Երեւանում կայացավ խոշոր միջազգային բժշկական համաժողով, որը համախմբեց առաջատար բժիշկների, գիտնականների եւ առողջապահական ոլորտի մասնագետների՝ ամբողջ աշխարհից: Միջոցառումը կազմակերպվել էր Ներքին հիվանդությունների բժշկության Հայկական ասոցիացիայի եւ Ընտանեկան բժիշկների հայկական ասոցիացիայի կողմից:

Ըստ միջոցառման կազմակերպիչ Լամարա Մանուկյանի՝ միջոցառումը տեղի է ունենում արդեն մի քանի տարի շարունակ եւ եւ աշխարհի տարբեր երկրներից մասնագետների մեկ հարկի տակ հավաքելով ձեւավորում է փորձի փոխանակման կարեւոր միջավայր: Համաժողովը դարձել է այն հիմնական հարթակը, որտեղ քննարկվում են ժամանակակից բժշկական մոտեցումները, ներկայացվում են միջազգային լավագույն փորձերը եւ ներդրվում հիվանդությունների ախտորոշման ու կանխարգելման նորագույն ուղեցույցներ:

Համաժողովի կարեւոր առանձնահատկություններից մեկն իր գործնական արդյունքներն են: Ամեն տարի Հայաստանում ներդրվում են նոր մեթոդներ եւ բուժման մոտեցումներ, ինչը էականորեն փոխում է առաջնային օղակի բժշկության որակը:

Եթե նախկինում բժիշկները հաճախ աշխատում էին առանց հստակ չափորոշիչների, ապա այսօր եվրոպական ուղեցույցները աստիճանաբար տեղայնացվում եւ կիրառվում են Հայաստանում, բարձրացնելով բուժօգնության որակը եւ միաժամանակ ուժեղացնելով մասնագետների իրավական պաշտպանվածությունը: Համաժողովի ընթացքում ներկայացվեց, որ այս տարի նախատեսվում է երեք նոր բժշկական մեթոդի ներդրում, ինչպես նաեւ գրանցվել են նոր դեղամիջոցներ, որոնք ուղղված են մետաբոլիկ առողջության եւ ճարպակալման դեմ պայքարին:

Նորարար թեմաներ եւ միջազգային փորձ

Համաժողովի օրակարգում ընդգրկված էին բժշկության արագ զարգացող ոլորտներին առնչվող, երբեմն անգամ առաջադեմ եւ նորարարական թեմաներ: Դրանց թվում էր վերականգնողական բժշկության նոր ուղղություններից մեկը՝մարդու սեփական ճարպային բջիջներից աճառային հյուսվածք ստեղծելու հնարավորությունը, որը կարող է հանգեցնել հոդային վիրաբուժության ոլորտի որակական փոփոխության:

Միջազգային փորձագետները ներկայացրին նաեւ գործնական նշանակություն ունեցող մոդելներ՝ ուղղված հիվանդությունների վաղ հայտնաբերմանը: Մասնավորապես, ներկայացվեցին այնպիսի մեթոդներ, որոնք թույլ են տալիս ընտանեկան բժիշկներին վաղ փուլերում հայտնաբերել եւ կանխարգելել սրտանոթային հիվանդությունները, կանխելով ծանր բարդությունները:

Շաքարային դիաբետը՝ գլոբալ մարտահրավեր

Համաժողովի առանցքային թեմաներից մեկը դարձավ շաքարային դիաբետն ու մետաբոլիկ խանգարումները: Մասնագետները ընդգծեցին, որ դրանք այլեւս չեն դիտարկվում որպես մեկ մասնագիտության շրջանակներում գտնվող խնդիրներ, այլ հանդիսանում են բազմագործոն հիվանդություններ՝ սերտորեն կապված սրտանոթային, երիկամային եւ այլ համակարգերի հետ:

Ներկայացված տվյալները վկայում են խնդրի լրջության մասին. աշխարհում միլիոնավոր մարդիկ ապրում են շաքարային դիաբետով, իսկ նախադիաբետի դեպքերը նույնիսկ կարող են գերազանցել այդ թիվը:

Սա նշանակում է, որ մեծահասակների զգալի մասը կարող է ունենալ ածխաջրային փոխանակության խանգարումներ՝ առանց դրա մասին իմանալու:

Դիաբետը շարունակում է մնալ մահացության առաջատար պատճառներից մեկը՝տարեկան միլիոնավոր դեպքերով, ինչը եւս մեկ անգամ ընդգծում է կանխարգելման եւ վաղ ախտորոշման անհրաժեշտությունը:

Կապակցված հիվանդություններ եւ ռիսկի գործոններ

Քննարկումների ընթացքում ընդգծվեց նաեւ ինսուլինռեզիստենտության, զարկերակային գերճնշման եւ սրտանոթային հիվանդությունների սերտ կապը: Այս խնդիրները հաճախ զարգանում են համատեղ ձեւով՝ զգալիորեն բարձրացնելով բարդությունների հավանականությունը:

Կենսակերպային գործոնները շարունակում են մնալ առանցքային: Մասնավորապես առանձնահատուկ ուշադրություն դարձվեց ծխելու գործոնին, որը շարունակում է մնալ առողջության համար ամենակարեւոր եւ փոփոխելի ռիսկի գործոններից մեկը: Մասնագետները եւս մեկ անգամ ընդգծեցին, որ ծխելը լիովին դադարեցնելը շարունակում է մնալ առողջության պահպանման «ոսկե ստանդարտը»: Սակայն ընդունվեց նաեւ, որ իրական կյանքում բազմաթիվ ծխողներ չեն կարողանում անմիջապես հրաժարվել այդ սովորությունից:

Այս համատեքստում քննարկվեց ռիսկերի մոդիֆիկացիայի մոտեցումը, որը ենթադրում է ոչ թե խնդրի անտեսում, այլ դրա ռիսկերի կառավարման փորձ: Մասնավորապես նշվեց, որ այն դեպքերում, երբ ծխողը չի դադարեցնում ծխելը, կարեւոր է նվազեցնել այրումից առաջացող վնասակար նյութերի ազդեցությունը, քանի որ հենց այրման գործընթացն է ձեւավորում առավելագույն տոքսիկ բաղադրիչները:

Այս մոտեցման շրջանակում դիտարկվում են այլընտրանքային լուծումները, որոնք հիմնված չեն այրման վրա, այլ ձգտում են քչացնել վնասակար միացությունների ներթափանցումը օրգանիզմ: Մասնագետները ընդգծեցին, որ այդպիսի լուծումները չեն հանդիսանում ռիսկերից զուրկ, նման մոտեցումը կարող է դիտարկվել որպես միջանկյալ քայլ դեպի ծխելու լիակատար դադարեցում, հատկապես այն մարդկանց համար, ովքեր դեռեւս պատրաստ չեն այդ քայլին:

Ընդհանուր առմամբ, շեշտադրվեց, որ արդյունավետ հանրային առողջապահական քաղաքականությունը պետք է ներառի թե՛ կանխարգելում եւ կրթություն, թե՛ գործնական, իրատեսական մոտեցումներ՝ ռիսկերը նվազեցնելու համար:

Թաքնված վտանգ եւ վաղ հայտնաբերման կարեւորություն

Համաժողովում առանձնահատուկ ուշադրություն դարձվեց այն փաստին, որ հիվանդությունը հաճախ զարգանում է աննկատ: Շատ մարդիկ տարիներ շարունակ չեն գիտակցում իրենց հիվանդությունը, մինչդեռ բարդությունները՝սրտանոթային կամ երիկամային, արդեն ձեւավորվում են: Այս համատեքստում առաջնային նշանակություն ունեն ընտանեկան բժիշկները, որոնք առաջինն են շփվում պացիենտների հետ եւ առանցքային դեր ունեն վաղ ախտորոշման եւ կանխարգելման հարցում:

Ժամանակակից բժշկությունն աստիճանաբար անցում է կատարում ավելի ամբողջական եւ պացիենտակենտրոն մոտեցման: Դիաբետի արդյունավետ կառավարումը այսօր չի սահմանափակվում միայն արյան շաքարի վերահսկմամբ: Այն ներառում է նաեւ սրտանոթային համակարգի պաշտպանություն, երիկամների ֆունկցիայի պահպանում, մարմնի զանգվածի կառավարում եւ ընդհանուր մետաբոլիկ հավասարակշռության ապահովում:

Համաժողովի հիմնական ուղերձը հստակ էր. ոչ վարակիչ հիվանդությունների դեմ պայքարը պահանջում է համատեղ եւ շարունակական ջանքեր: Նման նախաձեռնությունները կարեւոր դեր են խաղում բժշկության զարգացման, մասնագետների հզորացման եւ հանրային առողջության բարելավման գործում:

Երեւանում անցկացվող այսպիսի միջոցառումները նպաստում են ոչ միայն մասնագիտական առաջընթացին, այլ նաեւ ավելի առողջ հասարակության ձեւավորմանը:

«ՈՍԿԵ ԳՆԴԱԿ»

2026 թվականի «Ոսկե գնդակի» 70-րդ հոբելյանական մրցանակաբաշխությունը կկայանա հոկտեմբերի 26-ին՝ Լոնդոնում: Այս մասին հաղորդվում է մրցանակաբաշխության կազմակերպչի պաշտոնական կայքում: Նախկինում Փարիզում անցկացվող միջոցառումը տեղափոխվել է Մեծ Բրիտանիայի մայրաքաղաք: Այն պատմության մեջ առաջին անգամ կիյուրընկալվի Լոնդոնում՝ի հիշատակ Franče Football ամսագրի կողմից 1956 թվականին հիմնադրված այս հեղինակավոր մրցանակի առաջին դափնեկրի՝ անգլիացի լեգենդար ֆուտբոլիստ Սթենլի Մեթյուզի: «Բացի դրանից, հաշվի առնելով «Ոսկե գնդակի» 70-ամյակը՝տրամաբանական է ժամանակակից լավագույն ֆուտբոլիստներին մեծարել հենց այն երկրի սրտում, որտեղ ծնունդ է առել ֆուտբոլը»,- նշվում է կազմակերպիչների տարածած հայտարարության մեջ: 2010-ից 2015 թվականներին միջոցառումն անցկացվում էր Շվեյցարական Ցյուրիխում, քանի որ որպես համակազմակերպիչ հանդես էր գալիս հենց այդ քաղաքում տեղակայված Ֆուտբոլի միջազգային ֆեդերացիան (ՖԻՖԱ): Իսկ 2019 թվականից ի վեր պարգեւատրման արարողությունը ավանդաբար կազմակերպվում էր Փարիզի «Շատլե» թատրոնում: Հիշեցնենք, որ նախորդ՝ 2025 թվականի մրցանակաբաշխության արդյունքներով «Ոսկե գնդակին» արժանացել է ՊՍԺ-ի ֆրանսիացի հարձակվող Ուսման Դեմբելեն:

ԱԿԲԱ ԲԱՆԿ

ԱՄՓՈՓԵԼ Է

Ակբա բանկը բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովում տպավորիչ ցուցանիշներով ամփոփել է 2025 թվականն ու նոր նշաձողեր սահմանել ընթացիկ տարվա համար:

2025-ին Ակբա բանկը շարունակել է զարգացնել գործարար հարաբերությունները միջազգային կազմակերպությունների հետ՝ ներգրավելով ավելի քան 54,3 մլրդ դրամի միջոցներ, որոնք ուղղվել են Հայաստանում գյուղոլորտի եւ փոքր ու միջին ձեռնարկությունների ֆինանսավորմանը:

Ֆինանսական հիմնական ցուցանիշներն աճել են՝ հասնելով բանկի համար նոր ռեկորդային արդյունքների.

Զուտ շահույթը կազմել է շուրջ 35,9 մլրդ ՀՀ դրամ,

Ակտիվներն աճել են 14%-ով՝գերազանցելով 1 տրիլիոն ՀՀ դրամը (1,063 մլրդ ՀՀ դրամ),

Կապիտալն աճել է 19%-ով՝ հասնելով 195 մլրդ ՀՀ դրամի,

Վարկային պորտֆելն աճել է 18%-ով՝ հասնելով 633 մլրդ ՀՀ դրամի,

Լիզինգի պորտֆելը աճել է 11%-ով՝ հասնելով ավելի քան 103 մլրդ ՀՀ դրամի,

Ավանդների եւ թողարկված պարտատոմսերի աճը կազմել է 8%՝հասնելով 670 մլրդ ՀՀ դրամի:

2025-ին բանկի acba digital օգտագործողների թիվը աճել է 21%-ով՝ հասնելով շուրջ 643,000-ի:

«Մեր տեսլականը հստակ է՝ կառուցել բանկ, որը ոչ միայն արձագանքում է փոփոխություններին, այլ նաեւ ձեւավորում է ապագան, որը կարողանում է համադրել տեխնոլոգիան, մարդկային վստահությունն ու երկարաժամկետ արժեք ստեղծելու կարողությունը: 2025-ը ֆինանսական ցուցանիշների առումով ռեկորդային էր, որին հասել ենք թիմային աշխատանքի արդյունքում: 2026 թվականի համար ակնկալում ենք ոչ միայն պահել այս բարձր ցուցանիշները, այլեւ էլ ավելի բարձրացնել մեր նշաձողն ու նոր ցուցանիշներ գրանցել»,- նշել է Ակբա բանկի գլխավոր գործադիր տնօրեն Հակոբ Անդրեասյանը:

«2025-ին Ակբա բանկի խորհուրդը բավականին մեծ աշխատանք է կատարել կորպորատիվ կառավարման զարգացման ուղղությամբ: Այս փոփոխությունները կբերեն բանկի խորհրդի եւ գործադիր մարմնի միջեւ փոխհարաբերությունների արդյունավետության բարձրացմանը»,- նշել է Ակբա բանկի խորհրդի նախագահ Սոնա Իշխանյանը:«Անցած տարի մենք ունեցել ենք պատմական առումով ռեկորդային ցուցանիշներ. ակտիվների մեծությամբ հասել ենք շուրջ 1 տրիլիոն 63 միլիարդի, ինչը նախորդ տարվա համեմատ աճ է 14%-ով: Մյուս տպավորիչ ցուցանիշը մեկ բաժնետոմսին բաժին ընկնող շահույթն է, որը կազմել է շուրջ 6000 դրամ: 2021 թվականին, երբ բանկը IPO իրականացրեց, ներգրավեցինք 7.5 միլիարդ դրամ կապիտալ: Անցել է ընդամենը 5 տարի, եւ մենք այժմ բաշխում ենք նույն չափով՝ 7.5 միլիարդ դրամ շահաբաժին մեր բաժնետերերին»,- նշել է Ակբա բանկի ֆինանսական տնօրեն Ստյոպա Ջաքինյանը:

Ակբա բանկը 2025-ին շարունակել է զարգանալ՝ առաջնորդվելով իր առաքելությամբ, արժեքներով եւ երկարաժամկետ ռազմավարությամբ:

Բանկը վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից (Գ)

Հայտարարություն

Կորել է Լուիզա Նորիկի Գյուլասարյանի (Արզումանյանի)՝ Հայկական գյուղատնտեսական ակադեմիայի «Կաթի եւ կաթնամթերքի տեխնոլոգիա» մասնագիտության դիպլոմը, տրված 10.06.1997թ., դիպլոմի № 038062, գրանցման № 674:

● *Հ. Թումանյանի անվան ազգային տիկնիկային թատրոնում հունիսի 13-ին՝ժամը 12:00-ին, կկայանա «Շունն ու կատուն» ներկայացումը:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՏՎԱԾ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Ինչպե՞ս է ներկայացվում շահումով խաղերի կազմակերպման եւ անցկացման կանոնակարգը:
Մայիս Գրիգորյան, 57 տարեկան

ՊԱՏԱՍԽԱՆ. Շահումով խաղի կազմակերպչի կողմից ներկայացված շահումով խաղի կազմակերպման եւ անցկացման կանոնակարգի կամ դրանում կատարվող փոփոխությունների, լրացումների համաձայնեցումն իրականացվում է «Շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի եւ խաղատների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն:

Շահումով խաղի կազմակերպիչը, շահումով խաղի կազմակերպման եւ անցկացման կանոնակարգը կամ դրանում կատարվող փոփոխությունները, լրացումները համաձայնեցնում է լիազոր մարմնի հետ՝ նախքան դրանց կիրառումը, ներկայացնելով լիազոր մարմին՝ երկու օրինակից: Լիազոր մարմինը 15-օրյա ժամկետում ընդունում է որոշում՝ կանոնակարգին, առաջարկվող փոփոխություններին, լրացումներին համաձայնություն տալու կամ դրանք մերժելու մասին: Եթե լիազոր մարմինն ընդունել է կանոնակարգին կամ դրա փոփոխություններին, լրացումներին վերապահումով համաձայնություն տալու մասին որոշում, ապա կազմակերպիչը պարտավոր է այդ որոշումը ընդունելուց հետո՝ 10 օրվա ընթացքում, լիազոր մարմին ներկայացնել ուղղված փաստաթղթերը, որից հետո լիազոր մարմինը 5-օրյա ժամկետում հայտատուին տրամադրում է լիազոր մարմնի հետ համաձայնեցված շահումով խաղի կանոնակարգի կամ փոփոխությունների, լրացումների համաձայնեցված մեկ օրինակը: Եթե կազմակերպիչը վերը նշված որոշումն ընդունելուց հետո՝ 10 օրվա ընթացքում, ուղղված փաստաթղթերը լիազոր մարմին չի ներկայացնում, ապա լիազոր մարմնի որոշումը՝ կանոնակարգին կամ դրա փոփոխություններին, լրացումներին վերապահումով համաձայնություն տալու վերաբերյալ, համարվում է չեղյալ:

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 29.07.2004թ. թիվ 1164-Ն որոշման՝ եթե շահումով խաղի կազմակերպչի կողմից շահումով խաղի կազմակերպման եւ անցկացման կանոնակարգում առաջարկվող փոփոխությունների կամ լրացումների արդյունքում փոփոխվելու են N 4 ձեւում նշված՝ շահումով խաղերի մասին ներկայացված տվյալները, ապա կազմակերպիչը ներկայացնում է նաեւ շահագործման համար նախատեսված խաղային սարքավորումների ծագման սերտիֆիկատների պատճենները եւ շահումով խաղերի մասին տվյալները՝ համաձայն N 4 ձեւի:

Շահումով խաղի կազմակերպիչը ներկայացնում է նաեւ շահագործման համար նախատեսված խաղային սարքավորումների ծագման սերտիֆիկատների պատճենները եւ շահումով խաղերի մասին տվյալները՝ համաձայն N 4 ձեւի, այն դեպքում, երբ փոփոխվում են շահումով խաղերի վերաբերյալ տվյալներ, որոնք չեն հակասում համաձայնեցված շահումով խաղերի կազմակերպման եւ անցկացման կանոնակարգին:

ՀՀ ֆինանսների նախարարություն

Էջը՝ ՄԱՐԻԱՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Ի՞նչ է ՊԵԿ ներկայացվող տեղեկատվության արժանահավատության կանխավարկածը:
Լաուրա Գալստյան, 41 տարեկան

ՊԱՏԱՍԽԱՆ. Ծառայության մատուցման համար դիմած անձի կողմից ներկայացված տեղեկատվությունը ՊԵԿ-ը համարում է արժանահավատ: Անձանց կողմից ներկայացված տեղեկատվությունը կարող է համարվել անարժանահավատ, եթե կա դա փաստող կամ այլ անձանց ներկայացրած տեղեկատվություն: Ներկայացվող տեղեկությունների ճշտության ստուգում չի իրականացնում եւ պատասխանատվություն չի կրում դրա հետեւանքով առաջացած հնարավոր որեէ վնասի համար: Դիմող անձը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով պատասխանատվություն է կրում սխալ տեղեկատվություն տրամադրելու, ինչպես նաեւ իր տրամադրած սխալ տեղեկատվության հետեւանքով առաջացած վնասի համար:

ՀՀ ՊԵԿ

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ Գագիկ Շամշյանի

«Սուրբ Աստվածամայր» ԲԿ-ի բժիշկներին հաջողվել է փրկել 2 անչափահաս տղաների կյանքը, որոնք ավտովթար-հրդեհից հետո տեղափոխվել էին ԲԿ:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ. 52-53-01

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը:
Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	0 + 5 + 16 + 21
Կոտայքի լեռներ	+ 1 + 4 + 17 + 20
Կոտայքի նախալեռներ	+ 8 + 11 + 21 + 23
Գեղարքունիք	+ 1 + 5 + 16 + 20
Լոռի	+ 1 + 5 + 16 + 18
Տավուշ	+ 4 + 7 + 15 + 18
Արագածոտնի լեռներ	0 + 3 + 14 + 17
Արագածոտնի նախալեռներ	+ 6 + 11 + 21 + 26

Արարատ	+ 9 + 12 + 24 + 27
Արմավիր	+ 10 + 13 + 26 + 29
Վայոց ձորի լեռներ	+ 2 + 5 + 17 + 20
Վայոց ձորի նախալեռներ	+ 9 + 13 + 25 + 29
Սյունիքի լեռներ	+ 1 + 4 + 13 + 16
Սյունիքի նախալեռներ	+ 4 + 8 + 16 + 20
Սյունիքի հովիտներ	+ 8 + 12 + 25 + 28
Երեւան	+ 11 + 13 + 27 + 29

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **02.06.2026**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*